


**ԽՆԴԻՐՆԵՐ**

Խնդիրների լուծման համար տրվում է **75** րոպե **3-4-րդ դասարաններ**

- Հաշվիչ օգտագործել չի թույլատրվում:
- Ցուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վատասկել առավելագույնը 96 միավոր:
- Մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին և կազմակերպիչներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքը ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

**3 միավոր գնահատվող խնդիրներ**

1. Պատասխաններում բերված նկարներից որո՞ւմ է պատկերված աստղի կենտրոնական մասը:



2. Հասմիկն ուզում է 2014 թվի ներսում որևէ տեղ գրել 3 թվանշանը: Որտե՞ղ պետք է նա գրի այդ թվանշանը, որպեսզի ստացված հնգանիշ թիվը լինի հնարավորինս փոքր:

- (A) 2014 թվի առջևից (B) 2-ի և 0-ի միջև (C) 0-ի և 1-ի միջև  
(D) 1-ի և 4-ի միջև (E) 2014-ի վերջից

3. Ո՞ր տներն են կառուցված ճիշտ նույն եռանկյունիներից և ուղղանկյուններից:




- (A) 1, 4 (B) 3, 4 (C) 1, 4, 5 (D) 3, 4, 5 (E) 1, 2, 4, 5

4. Կռալան արթուն ժամանակ մեկ ժամում ուտում է 50 գ տերև: Երեկ նա քնեց 20 ժամ: Քանի՞ գրամ տերև կերավ նա երեկ:

- (A) 0 (B) 50 (C) 100 (D) 200 (E) 400

5. Մարիամը կատարեց հանման գործողություններ և արդյունքում ստացավ զրոյից մինչև հինգ թվերը: Նա միացրեց կետերը սկսելով 0 արդյունքով կետից և ավարտելով 5 արդյունքով կետում (տե՛ս նկ. 1): Պատկերներից ո՞րը նա ստացավ:




6. Արամի կառուցած ավագն ամրոցները թվով ավելի քիչ են, քան Միքայելինը, բայց ավելի շատ են, քան Շուշանինը: Լուսինեն և՛ Արամից, և՛ Միքայելից շատ ամրոց է

կառուցել: Նանեն կառուցել է ավելի շատ ամրոց, քան Միքայելը, բայց ավելի քիչ, քան Լուսինեն: Նրանցից ո՞վ է ամենամեծ թվով ամրոց կառուցել:



- (A) Արամը (B) Լուսինեն (C) Միքայելը (D) Նանեն (E) Շուշանը

7. Վարդանը նկարում ցույց տված վանդակներում գրում է թվեր այնպես, որ յուրաքանչյուր վանդակում գրված թիվը հավասար լինի դրա տակ գտնվող երկու վանդակներում եղած թվերի արտադրյալին: Ի՞նչ թիվ պետք է գրի Վարդանը մոխրագույն վանդակում:



- (A) 0 (B) 1 (C) 2 (D) 4 (E) 8


8. Աննան ունի նկ. Ա-ում բերված չորս մարմինները: Առանց մարմինները իրար վրա դնելու՝ նա դրանցով լրիվ ծածկում է նկ. Բ-ում բերված պատկերը: Այդ դեպքում պատասխաններից որո՞ւմ է 3-րդ մարմինը գտնվում ճիշտ դիրքում:



- (A) (B) (C) (D) (E)

**4 միավոր գնահատվող խնդիրներ**


9. Պարոն Նարեկն իր խանութի պատուհանի վրա նկարել է ծաղիկներ (տե՛ս նկարը): Ի՞նչ տեսք ունեն այդ ծաղիկները պատուհանի մյուս կողմից:



10. Ամանում կային կոնֆետներ: Սոնան վերցրեց կոնֆետների կեսը: Հետո Արմենը վերցրեց ամանում մնացած կոնֆետների կեսը: Դրանից հետո Կարինեն վերցրեց մնացած կոնֆետների կեսը: Վերջում ամանում մնաց 6 կոնֆետ: Քանի՞ կոնֆետ կար ամանում ամենակզբում:


- (A) 12 (B) 18 (C) 20 (D) 24 (E) 48

11. Ո՞ր սալիկը պետք է ավելացնել նկարի ներքևի աջ անկյունում, որպեսզի սալիտակ մասի մակերեսը հավասար լինի սև մասի մակերեսին:



- (A) [White square] (B) [Black square] (C) [White square with black bottom half] (D) [White square with black top half] (E) [White square with black right half]


12. Տիգրանը նետերով խփում է նկարում պատկերված թիրախին, որի վրա երևում են այն միավորները, որոնք նա ստանում է թիրախին դիպչելու դեպքում: Եթե նետը թիրախին չի դիպչում, Տիգրանը միավոր



չի ստանում: Տղան կրակում է երկու անգամ և գումարում ստացված միավորները: Բերված գումարներից ո՞րը չի կարող լինել նրա հավաքած միավորների արժեքը:

- (A) 60 (B) 70 (C) 80 (D) 90 (E) 100

13. Դավիթն ուներ հավասար քանակի մոխրագույն, սև և սպիտակ շրջանակներ, որոնցից մի քանիսը նա դարսեց իրար վրա, ինչպես ցույց է տրված նկարում: Դրանից հետո նրա մոտ մնաց չօգտագործած հինգ շրջանակ: Քանի՞ սև շրջանակ ուներ Դավիթը սկզբում:





- (A) 5 (B) 6 (C) 7 (D) 15 (E) 18


14. Ճագարը շատ է սիրում կաղամբ և գագար: Մեկ օրում նա ուտում է կամ 9 գագար, կամ 2 կաղամբ, կամ 1 կաղամբ և 4 գագար: Մեկ շաբաթվա ընթացքում ճագարը կերել է 30 գագար: Քանի՞ կաղամբ է կերել ճագարը մեկ շաբաթում:

- (A) 6 (B) 7 (C) 8 (D) 9 (E) 10

15. Նկարում բերված մարմինը ստացվել է միանման 8 խորանարդիկ իրար միացնելու արդյունքում: Ի՞նչ տեսք ունի մարմինը վերևից:



16. Քանի՞ կետ կա նկարում:




- (A) 180 (B) 181 (C) 182 (D) 183 (E) 265

**5 միավոր գնահատվող խնդիրներ**

17. Կենգուրու մոլորակում 1 կենգուտարին ունի 20 կենգավիս, իսկ ամեն կենգամսում կա 6 կենգշաբաթ: Քանի՞ կենգշաբաթ կա մեկ քառորդ կենգսարում:

- (A) 9 (B) 30 (C) 60 (D) 90 (E) 120

18. Յոթ երեխաներ շրջան կազմեցին այնպես, որ ոչ մի երկու տղա կանգնած չէր կողք կողքի, ոչ էլ երեք աղջիկ էր կանգնած իրար կողքի: Շրջանում կանգնած աղջիկների թվի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:



- (A) Նրանց թիվը կարող է լինել միայն 3: (B) Նրանց թիվը կարող է լինել 3 կամ 4:  
 (C) Նրանց թիվը կարող է լինել միայն 4: (D) Նրանց թիվը կարող է լինել 4 կամ 5:  
 (E) Նրանց թիվը կարող է լինել միայն 5:


19. Մանեն շարել է քարտերը իրար հետևից, ինչպես ցույց է տրված նկարում: Յուրաքանչյուր քայլի ժամանակ



թույլատրվում է տեղերով փոխել ցանկացած երկու քարտ: Ամենաքիչը քանի՞ տեղափոխումից հետո Մանեն կստանա KANGAROO բառը:


- (A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

20. Դավիթը միանման քարտերից հավաքում է եռանկյունաձև պատկերներ, որոնցից առաջին երեքը ցույց են տրված նկարում: Յուրաքանչյուր հաջորդ եռանկյունաձև պատկերը պարունակում է մեկ լրացուցիչ շաբբ: Ամեն պատկերի ներքևի շաբբի եզրային քարտերը սպիտակ են, իսկ մնացած բոլորը՝ սև: Դավիթը շարունակում է նման ձևով հավաքել եռանկյունաձև պատկերներ: Քանի՞ սև քարտ կլինի նրա հավաքած 6-րդ պատկերի մեջ:



- (A) 19 (B) 21 (C) 26 (D) 28 (E) 34

21. Կենգուրու հայրիկը մի քանի խաղալիք գնեց և խանութի վաճառողին վճարեց 150 կենգոդրամ (տե՛ս նկարը, որտեղ խաղալիքների գները բերված են կենգոդրամով): Նրան վերադարձրին 20 կենգոդրամ: Այնուհետև կենգուրու հայրիկը միտքը փոխեց և գնված խաղալիքներից մեկը փոխանակեց մի այլ խաղալիքի հետ: Նրան վերադարձրին ևս 5 կենգոդրամ: Ո՞ր խաղալիքները կենգուրու հայրիկը խանութից ստարավ իր հետ:




- (A) կառքը և ինքնաթիռը (B) կառքը և ավտոբուսը (C) կառքը և տրամվայը  
 (D) մոտոցիկլետը և տրամվայը (E) ավտոբուսը, մոտոցիկլետը և տրամվայը

22. Գրեք 0, 1, 2, 3, 4, 5, 6 թվերը վանդակներում այնպես, որ գումարման գործողությունը լինի ճիշտ: Ի՞նչ թվանշան գրված կլինի մոխրագույն վանդակում:




- (A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

23. Նկ. 1-ում բերված պատկերը կազմված է փոքր քառակուսիներից: Դրանցից ամենաշատը քանի՞ սը կարելի է ներկել այնպես, որ պատկերի վրա որևէ 2x2 մոխրագույն քառակուսի չլինի (տե՛ս նկ. 2):



- (A) 18 (B) 19 (C) 20 (D) 21 (E) 22

24. Նորայրը գրում է 1-ից մինչև 9-ը թվանշանները 3x3 աղյուսակի մեջ այնպես, որ յուրաքանչյուր վանդակ պարունակում է միայն մեկ թվանշան: Նա արդեն գրել է 1, 2, 3 և 4 թվանշանները, ինչպես ցույց է տրված նկարում: Երկու թվանշան համարվում են «հարևան», եթե դրանք գրված են ընդհանուր կողմ ունեցող վանդակներում: Բոլոր թվանշանները գրելուց հետո Նորայրը նկատեց, որ 5 թվանշանի «հարևանների» գումարը 13 է: 6 թվանշանի «հարևանների» գումարը նույնպես 13 է: Ի՞նչ թիվ է գրված մոխրագույն վանդակում:



- (A) 5 (B) 6 (C) 7 (D) 8 (E) 9